ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀԱՐԱՓՈՓՈԽ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ՀԱԿՈԲՅԱՆ Հ. Հ.

Աշխարհում ծայր առած սրընթաց զարգացումները փոխում են տարածաշրջանների ժողովրդագրական, մշակութային, տնտեսական, ինչո՞ւ չէ՝ նաև քաղաքական պատկերը: Բնակչության զանգվածային տեղաշարժերը, պատերազմական ավելացող օջախները, ահաբեկչություններն ու բռնությունները դարձել են չարիք հատկապես զարգացած երկրների համար, կրոնական հակադրությունները, աղքատության մեծացումը, Երկիր մոլորակի հարստությունների կուտակումը մի շարք երկրների ձեռքին ազդում են աշխարհի բնակչության գործելակերպի վրա և պատճառ դառնում միգրացիայի ահագնացման և սփյուռքների ստեղծման ու խոշորացման: Այս գործընթացները կամա թե ակամա ազդում են հայկական համայնքների վրա՝ դրանց կառուցվածքային փոփոխությունների ենթարկելով: Վերջին ժամանակներս Միջին Արևելքով սկսել է վտանգվել հայկական մի շարք հայահոծ համայնքների գոյությունը: Գաղտնիք չէ, որ հատկապես Հայաստանի անկախացումից ի վեր Հայկական սփյուռքը դարձավ մեծագույն հենարան հայրենիքին և նրա իրական շարունակությունը: Աշխարհափոփոխությունները, ծառացած մարտահրավերները իրենց ազդեցությունն են թողնում և՛ Հայաստանի, և՛ Սփյուռքի վրա:

Հայաստանի Հանրապետությունը անցած 25 տարիներին իր անկախ պետականությունը կերտել և կերտում է պատմաքաղաքական, սոցիալ-տնտեսական անասելի դժվարությունների հաղթահարմամբ: Հայաստանի անկախ Հանրապետությանը ծանր ժառանգություն բաժին հասավ: 1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժը անօթևան թողեց 500 հազար մարդու, երկրի հյուսիսարևելյան տարածքի ենթակառուցվածքների 40%-ից ավելին ավերվեց, Բաքվի և Սումգայիթի նախճիրից (1988-1990 թթ.) մազապուրծ շուրջ 400 հազար փախստականներ ապաստանեցին հայրենիքում: Այս ամենին գումարվեցին էներգետիկ ճգնաժամը, մեզ պարտադրված Արցախյան պատերազմը և վերջապես Խորհրդային Միության փլուզումը: Իբրև հետևանք՝ դադարեց գործել արդյունաբերական ողջ համալիրը, կաթվածահար եղան տնտեսական, քաղաքական համակարգերը: Նոր անկախ երկրում քայլեր էին ձեռնարկվում պետություն կառուցելու, երկիրն այս վիճակից հանելու և անկախ պետական կառավարման համակարգ ստեղծելու ուղղությամբ: «Հայոց

պետականության վերականգնումը եղել է Հայաստան–Արցախ–Սփյուռք եռամիասնությունը կամրջող կարևորագույն նպատակ»[1]:

Աշխարհասփյուռ հայությունը 70 տարուց ավելի երազում էր ազատ և անկախ հայրենիք ունենալու մասին: Եվ 1991 թ. սեպտեմբերի 21-ին հայության նվիրական իղձերն իրականություն դարձան: Սփյուռքը սկսեց համախմբվել հայրենիքի շուրջ՝ իր մարդկային, նյութական ռեսուրսները, կապերն ու հնարավորությունները, կարողությունները ի սպաս դնելով ՀՀ և ԼՂՀ կայացման ազգանվեր գործին: Սփյուռքը, որի պայքարի, համախմբման կարևորագույն առարկան Հայոց ցեղասպանությունն էր, Հայ դատի լուծման համար պայքարը, Հայաստանի անկախացումից հետո իր հիմնական խնդիրը դարձրեց նաև Հայաստանին և Արցախին սատարելը:

Քառորդ դար հայության հավաքական ջանքերով կառուցվեց անկախ և ազատ պետություն. ձևավորվեցին պետական կառավարման ժողովրդավարական հիմքեր ու մարմիններ, կազմավորվեց տարածաշրջանի ամենամարտունակ բանակը, ազատականացվեց տնտեսությունը, ստեղծվեց քաղաքացիական հասարակություն, Հայաստանը դարձավ միջազգային հանրության լիիրավ անդամ: Այս գործընթացներն ու իրողությունները ներկայումս լիովին երաշխավորում են հայկական երկու պետությունների ինքնիշխան ու արժանապատիվ գոյության բնական իրավունքն ու զարգացման հեռանկարները:

Յավոք, անցնող տարիները եղել են բարդ ու խոչընդոտներով լեցուն. ժողովուրդը ծանրագույն պայմաններում մի կողմից երկիր է կառուցել, մյուս կողմից՝ ստիպված եղել պայքարելու նենգ ու անկանխատեսելի հակառակորդի թշնամական գործողությունների դեմ: Օբյեկտիվ դժվարությունների (արտաքին մարտահրավերներ, տնտեսական ճգնաժամեր, պատերազմական իրավիճակներ, փախստականներ, ԼՂ-ի չկարգավորված հակամարտություն) հաշվառմամբ անգամ, այնուամենայնիվ, Հայաստանում տիրող ներքին իրավիճակը գոհացուցիչ համարվել չի կարող: Թեև համեմատության մեջ արձանագրվում են ձեռքբերումներ, հաջողություններ, սակայն մտահոգիչ է երկրում աղքատության և արտագաղթի մակարդակը, որը քննարկվում է հատկապես անկախության սերնդի կողմից: «Անկախության սերունդը մեր երկրում ունի բարձր չափանիշներ և բարձր պահանջներ: Ունի նաև դժգոհություն, իսկ այդ դժգոհությունն առաջընթացի կարևոր և պարտադիր բաղադրիչ է: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ կլիներ, եթե նրանք գոհ ու բավարարված լինեին: Նրանք դժգոհում են, բողոքում, քննադատում և պահանջում, որովհետև ուզում են ապրել ավելի լավ երկրում:

[1] ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ, http://www.presi dent.am/hy/press-release/item/2016/09/21/President-Serzh-Sargsyan-meeting-with-representatives-of-Diaspora-organizations/, 21.09.2016:

Ուզում են ապրել ավելի ազատ, ավելի օրինական, ավելի բարեկեցիկ երկրում»[2]:

Իրապես, տնտեսական զարգացումների վրա բացասաբար է ազդում կոռուպցիան, որը հանգեցնում է անարդարության և հիասթափության: Կոռուպցիայի դեմ պայքարում կարևոր են անկախ դատական համակարգի կայացումը, բարձրաստիճան պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրումը և նրանց գործունեության թափանցիկության ու հաշվետվողականության ապահովումը, պատասխանատվության բարձրացումը:

Կարելի է նաև մարտահրավեր համարել այն, որ տնտեսական զարգացումներն անհամաչափ են. մարզերի և հատկապես սահմանամերձ շրջանների սոցիալ-տնտեսական զարգացումը, այդ տարածքներում աշխատատեղերի ստեղծումը օրվա հրամայական են: Սփյուռքի ազդակների շարունակականությամբ հանդերձ՝ կառավարությունը ձգտում է երկրում մակրոտնտեսական կայունություն ապահովել, ֆինանսական շուկան զերծ պահել վայրիվերումներից: Այս ամենին կարող է խթան հանդիսանալ օտարերկրյա, սփյուռքյան նոր ներդրումների ավելացումը, որը հնարավոր կդառնա տնտեսական կյանքում հավասար մրցակցային պայմանների ապահովման և հովանավորչության բացակայության դեպքում:

«Մենք պարտավոր ենք հասնել սոցիալական համերաշխության երկրի ներսում: Սոցիալական խնդիրները սերտորեն կապված են արդարության հետ, և մենք պարտավոր ենք էապես բարձրացնել հասարակական հարաբերություններում արդարության հաստատման գործընթացի տեմպը:

Մենք պարտավոր ենք ստեղծել այնպիսի հասարակական միջավայր, որտեղ չեն լինի արտոնյալներ, այլ կլինի միասնական ժողովուրդ՝ կարգապահ, օրենքները հարգող, խաղաղություն սիրող, հպարտ»[3]:

25 տարվա փորձը, քաղաքական, սոցիալ-տնտեսական զարգացման անհրաժեշտությունը հանգեցրին սահմանադրական բարեփոխումներին: Այդ գործընթացը որակապես փոխելու է կառավարման համակարգը և միտված է իրավական պետության կառուցմանը, որտեղ մարդը և նրա իրավունքները բարձրագույն արժեք են, բոլորը հավասար են օրենքի առաջ, արդարադատության համակարգը զերծ է ազ-

---

[2] Տե՛ս ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը անկախության տոնի առթիվ, http://www.president.am/hy/statements-and-messages/item/2016/09/21/ President-Serzh-Sargsyan-speech-for-independence-day/, 21.09.2016:

[3] Տե՛ս ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Սահմանադրության փոփոխու-թյունների կենսագործման վերաբերյալ, http://www.president.am/hy/-statements-and-messages/item/2016/02/12/President-Serzh-Sargsyan-meeting-Constitution-speech/, 12.02.2016:

դեցություններից, խորհրդարանը ընտրվում է ժողովրդի կամքով, գերակայում է իրավունքը:

Հզոր Հայաստանի կառուցման նպատակով պետությունը ձեռնարկում է բոլոր հնարավոր միջոցները՝ ջանքեր գործադրելով ազատ և հավասար տնտեսական մրցակցություն ապահովելու, ազգի կապիտալը խելամտորեն օգտագործելու, գործարար գրավիչ մթնոլորտ ձևավորելու և ներդրումները խրախուսելու ուղղությամբ:

«Սփյուռքն ու Հայաստանը կազմում են մեկ ընդհանրություն՝ ազգ: Սփյուռքի իրավունքը Հայաստանում ճանաչված է ու խրախուսելի, նրա ներուժն ամբողջությամբ ներառված է»[4]:

«Ոչ պատերազմ և ոչ խաղաղություն» իրավիճակը, բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներ առիթ են տալիս Հայաստանից արտագաղթի, որը հայության առջև ծառացած խիստ կարևոր հիմնախնդիր է դառնում: Մյուս կողմից՝ Հայաստանում հետպատերազմյան հասարակական ու տնտեսական միջավայրի հետագա բարելավումը, ՓՄՁ-ներին տնտեսական օժանդակություն տրամադրելը և տնտեսական կյանքում հավասար մրցակցային պայմանների ապահովումը, պետական բյուջեի խելամիտ օգտագործումը և բոլոր բնագավառներում արդարության հաստատումը համատեղ ջանքեր, հետևողական աշխատանք են պահանջում: Հայ ժողովրդի ու Հայաստանի շահերը պետք է լինեն գերակայող արժեքներ, և բոլորի գործողություններն ու քայլերը պետք է բխեն այդ իրողության գիտակցումից:

Կառավարման համակարգի փոփոխությունը, իշխանության ճյուղերի միջև պատասխանատվության հստակ բաժանումը, ընդդիմությանը տրված սահմանադրական երաշխիքները, քաղաքացիական հասարակության ակտիվացմանը նպաստող քայլերը, Սփյուռքի ներուժի օգտագործումը, մեր կարծիքով, կհանգեցնեն իրավական և ժողովրդավարական պետության հիմքերի ամրապնդման:

«Ճի՛շդ է, անկախութեան կերտումը դժուար է. սակայն, անկախութեան պահպանումը ու ամրապնդումը շա՛տ աւելի դժուար է. ան կը պահանջէ հաւաքական հաւատք ու կամք եւ մանաւանդ ամբողջական յանձնառութիւն:.... Հայաստան-Սփիւռք գործակցութիւնը մեր ազգի ապագային համար առաջնահերթ կարեւորութիւն ներկայացնող մարտահրաւէր մըն է, որովհետեւ կը հաւատանք, որ Հայաստանի ու Ղարաբաղի հզօրացումը ու Սփիւռքի վերակազմակերպումը, ինչպէս նաեւ մեր այլ համահայկական հարցերու ճիշդ հունաւորումը ու արդար լուծումը լայն չափով աղերս ունին մեր ժողովուրդի երկու հատուածներուն միջեւ ծաւալող սերտ ու ամբողջական գործակցութեան հետ: Հետեւաբար, անհրաժեշտ է իրապաշտ մօտեցումով ու համապարփակ հայեցակէտով ծրագրել Հայաստան-Սփիւռք գործակցութիւնը իր բոլոր տարածքներով ու մարզերով՝ ի գործ դնելով մեր ազգին ամբողջ

[4] Նույն տեղում:

կարողականությունը ու հեռու մնալով պարագայական նախաձեռնություններէ»,- նշել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ն[5]:

Հայկական աշխարհում առկա տրամադրությունները, Սփյուռքի կապը հայրենիքի հետ, Հայաստանում տիրող իրավիճակը պայմանավորված են նաև արտաքին գործոններով, արտաքին մարտահրավերներով, տարածաշրջանային խնդիրներով և 23 տարի Ադրբեջանի և Թուրքիայի կողմից շարունակվող շրջափակմամբ:

Այսօր հայկական հանրության առջև ծառացել են համաշխարհային, տարածաշրջանային և ներքին մարտահրավերներ:

Համաշխարհային մարտահրավերները վերաբերում են ֆինանսատնտեսական ճգնաժամին, որը վերջին շրջանում ուղեկցում է աշխարհի տնտեսությանը: Մոլորակի տարբեր կետերում բռնկվող պատերազմները, ահաբեկչությունները, համաճարակներն ու բնական աղետները ևս սպառնալիք են մարդկության առաջընթացի համար: Այդ մարտահրավերները էապես ազդում են հայկական համայնքների վրա: Դրանք են՝

ա) Մերձավոր Արևելքի ճգնաժամը,

բ) իսլամական պետություն ահաբեկչական կազմակերպության ընդգծված հակաքրիստոնեական գործունեությունը,

գ) անընդհատ տեղաշարժերը, համայնքների քայքայումը և նորերի ստեղծումը, հների կառուցվածքային փոփոխությունները:

Հայաստանի և Արցախի շուրջ տեղի ունեցող իրադարձությունները ևս ազդում են Սփյուռքի վրա.

1. Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն ու ԼՂ չկարգավորված հիմնախնդիրը, որը զուգորդվում է պարբերաբար պատերազմական գործողություններով:

2. Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի 23 տարի շարունակվող շրջափակումը, որը տնտեսական լուրջ հարված է հասցնում երկրին՝ նպաստելով արտագաղթի ու աղքատության աճին:

3. Հարևան երկրներում առաջացող անկայուն իրավիճակները: Մերձավոր Արևելքում իրավիճակի սրման հետևանքով տարածաշրջանի՝ կազմալուծման եզրին հայտնված հայկական երբեմնի ստվար համայնքները, բազմահազար մեր հայրենակիցների փախստական դառնալը: Նրանց մի մասն էլ տեղափոխվել է հայրենիք, և արդյունքում Հայաստանը եվրոպական երկրների մեջ առաջիններից է՝ ընդունած փախստականների թվով:

---

[5] Տե՛ս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա-ի ողջույնի խոսքը Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողովում, Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողով. համաժողովի, Ե., 2011, էջ 14-15:

Հայաստանի և հայ ժողովրդի համար այսօր էական դժվարություն են ներկայացնում տարածաշրջանային մարտահրավերները և ԼՂ հիմնախնդրի կարգավորման ձգտումը:

Տարածաշրջանային մարտահրավերները Հայաստանի Հանրապետության և Արցախի առջև ծառանում են Հայաստանի անկախության ձեռքբերումից ի վեր: Լեռնային Ղարաբաղի շուրջ ծավալված հակամարտությունն արդեն 28 տարի է չի հանգուցալուծվել և անընդհատ թեժանում է Ադրբեջանի կողմից իրականացվող ահաբեկչությունների, դիվերսիաների, դիպուկահարների գործողությունների հետևանքով:

Տարօրինակ է, որ Արևմուտքը, հրճվանքով ընդունելով խորհրդային հասարակարգի վերացումը, ստալինյան շատ ու շատ որոշումների և գործերի չեղարկումը, չգիտես ինչու, 1921 թ. ԼՂ-ն Ադրբեջանին բռնակցելու մասին ստալինյան որոշումը «սրբորեն» պաշտպանում է, իսկ Մինսկի խմբի համանախագահների փորձերը հիմնահարցի լուծումները գտնել միջազգայնորեն ընդունված սկզբունքների հիման վրա, առայժմ ապարդյուն են անցնում:

Խաղաղության ձեռքբերմանը միտված՝ 1994 թ. մայիսի 12-ին հաստատված զինադադարն անընդհատ խախտում է հակառակորդը: Անցնող տարիներին մի կողմից նավթային հնարավորությունները թույլ տվեցին Ադրբեջանին առավել զինվել, ձեռք բերել ժամանակակից ռազմական տեխնիկա, իսկ մյուս կողմից, աջակից ունենալով Իսրայելին և եղբայրական հարաբերությունների մեջ գտնվելով Թուրքիայի հետ, հակառակորդը փոխեց հռետորաբանությունը՝ իր հասարակությանը նախապատրաստելով պատերազմի, շարունակելով սերմանել ատելություն, անհանդուրժողականություն, թշնամանք:

Կեղծիքը, ապատեղեկատվությունը, միջազգային ատյաններին թյուրիմացության մեջ գցելը անցնող տարիներին դարձել են թուրք-ադրբեջանական տանդեմի պետական քաղաքականությունը, որին հայությունը պատասխանում է իր արդարացի իրավունքների պաշտպանության ու հաստատման ուղղությամբ միջազգայնորեն ընդունված քայլերի ձեռնարկմամբ: Սփյուռքի ակտիվ մասնակցությամբ և Հայաստանի աջակցությամբ ԼՂՀ-ն կառուցում է ժողովրդավարական, իրավական պետություն, ակտիվորեն խթանում քաղաքացիական հասարակության զարգացումը: «Հայաստան» համահայկական հիմնադրամի գրեթե բոլոր միջոցներն ուղղվում են Արցախի զարգացմանը: Արցախում հասակ է առնում անկախության սերունդը, որը չի կարող ապրել մի երկրում, որտեղ իշխում են ալիևյան բռնապետությունն ու կլանային տնտեսությունը, որտեղ մարդու իրավունքները համատարած խախտվում են և ոտնահարվում:

Տարիներ շարունակ երկրում սերմանելով հայատյացություն՝ նախագահ Ալիևը իրեն արդարացնելու համար նաև 2016 թ. պարբերաբար կազմակերպում է հարձակումներ, խախտում ԼՂՀ-ի հետ զինադադարի պայմանավորվածությունը: Միաժամանակ կրակահերթեր

են արձակվում Հայաստանի սահմանի ուղղությամբ, չեն դադարում դիպուկահարների կրակոցները և դիվերսիոն խմբերի գործողությունները: 2016 թ. ապրիլի լայնամասշտաբ ռազմական գործողությունները ադրբեջանական հայատյաց քաղաքականության ևս մեկ դրսևորումը դարձան՝ խլելով հարյուրավոր մարդկանց կյանքեր:

Անցած տարիներին ադրբեջանական կողմը փորձել և այժմ էլ փորձում է վիժեցնել բանակցային գործընթացը, տարբեր ատյաններում հանդես է գալիս Մինսկի խմբի ձևաչափի փոփոխման, 1994 թ. զինադադարի մասին փաստաթղթի՝ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ առաջարկություններով: Ադրբեջանն առավել հակված է ռազմական ճանապարհով լուծելու ԼՂ հիմնախնդիրը կամ իրավիճակը փոխելու՝ ստանալով դիրքային առավելություն, որպեսզի նոր իրավիճակում բանակցությունների ընթացքում դառնա թելադրող կողմ:

Արդեն 24-ամյա ԼՂՀ պաշտպանության բանակը կարողանում է համառորեն դիմակայել ցանկացած ոտնձգության: Բանակի կողքին և թիկունքին է ողջ հայ ժողովուրդը: Վտանգի պահին առավել կազմակերպված է դառնում Սփյուռքը, և պատահական չէր, որ ապրիլյան օրերին գլխավոր կարգախոսներն էին՝ «Մենք Արցախն ենք» և «Ձեռք ձեռքի տված պետք է պաշտպանենք Հայաստանը»:

Հայաստանի և ԼՂՀ ղեկավարությունները գործադրում են բոլոր ջանքերը ԼՂ հակամարտության կարգավորումն իրականացնելու բացառապես բանակցությունների միջոցով, խաղաղ ճանապարհով: Սփյուռքյան, հատկապես՝ լոբբիստական կազմակերպությունները հետևողական աշխատանք են տանում ԼՂՀ անկախության ճանաչման ուղղությամբ՝ նպաստելով այդ խնդիրը տեղական, նահանգային և պետական մակարդակներում որպես օրվա հրամայական բարձրաձայնելուն: Եվ քանի դեռ ԼՂ հակամարտությունը լուծում չի ստացել, այն լուրջ մարտահրավեր է մնում ողջ հայ ժողովրդի համար:

Հայոց ցեղասպանությունից 100 տարի անց էլ Թուրքիան շարունակում է իր գործողություններով մնալ որպես տարածաշրջանը ապակայունացնող գործոն: Այդ երկիրը 23 տարուց ավելի ոչ միայն Ադրբեջանի հետ շրջափակման մեջ է պահում Հայաստանի երկու սահմանները՝ այդպիսով միլիարդավոր դոլարների վնաս հասցնելով Հայաստանի տնտեսությանը, նպաստելով աղքատության աճին, անընդհատ զգացնել տալով ցեղասպանության հետևանքները, այլև իր պահվածքով, քաղաքական հայտարարություններով խրախուսում է Ադրբեջանի պատերազմական գործողությունները ԼՂՀ-ի և ՀՀ-ի դեմ, անթաքույց հպարտությամբ հռչակում, որ կանգնած է իր «փոքր եղբոր» թիկունքին, և որ ԼՂՀ-ն իր բոլոր տարածքներով պետք է անհապաղ վերադարձնել Ադրբեջանին:

Չի դադարում նաև թուրքական ճզմիչ ներքին քաղաքականությունը հայկական՝ աստիճանաբար փոքրացող համայնքի նկատմամբ. ոչ միայն ոտնահարվում են մարդու հիմնական իրավունքները, այլև

տիրում է վախի, անվստահության մթնոլորտ: Թուրքական իրականության մեջ անհանդուրժողականությունն ու հայատյացությունը շարունակում են ստանալ նոր դրսևորումներ և նոր բնորոշումներ՝ ձեռք բերելով ծայրահեղ երանգներ, երբ հայերին, հատկապես ծպտյալ հայերին վերագրվում են աներևակայելի գործողություններ, անգամ նրանք դիտարկվում են որպես Թուրքիայի ամբողջականությանը սպառնացող վտանգ: Նման ծայրահեղ մոտեցումը հատկապես դիպուկ կերպով երևում է հանրահայտ թուրք ազգայնամոլ Յուսուֆ Գեզգինի հետևյալ խոսքերում. «Մեր երկրում գոյություն ունի ուժեղ և ազդեցիկ մի հատված, որին անվանում ենք «կրիպտո օտարերկրացի»: Սրանք թուրք-մահմեդականի պատյանի մեջ պարուրված, իրենց իրական ինքնությունը թաքցնող, ատելությամբ ապրող, կարևոր պաշտոններ գրավելով՝ մեր ազգի զավակների համար դեպի պաշտոններ տանող ճանապարհը փակող անձինք են: Ծպտյալ օտարերկրացիների մի կարևոր հատվածն էլ հայերն են: Եթե անգամ ոչ սաբաթայականների չափ, այնուամենայնիվ, կրիպտո հայերը շատ ազդեցիկ են Թուրքիայում: Իրենց նախկին ախոյանները հանդիսացող սաբաթայականների հետ համերաշխ են սև թուրքերի հարցում: Այսօր բանակից մինչև դատական համակարգ, արվեստներից մինչև քաղաքական դաշտ՝ ամենուր, իրենց գիտակցությունն ու ատելությունը պահպանող բազմաթիվ ծպտյալ հայեր կան: Կառույցներից մեկն էլ, որում բավականին մեծ թիվ են կազմում կրիպտո հայերը, մեր ազգի գլխին մութ խաղեր խաղացող, սադրանքներով մեր մարդկանց իրար դեմ հանել ձգտող, ամեն տեսակի հանցագործություն կատարող էրգենեքոն ահաբեկչական կազմակերպությունն է[6]»:

Վերջին շրջանում Թուրքիայում անթաքույց խոսվում է նոր-օսմանականության մասին: Հայ վերլուծաբանների, քաղաքագետների կարծիքով՝ նմանատիպ գաղափարների առաջին սաղմերն ի հայտ են եկել Օզալի ժամանակներում, երբ նա իսլամը համարեց թուրքական ինքնության կարևոր բաղադրիչը: Ճիշտ է՝ չափավոր, սակայն Օզալին շարունակող Դեմիրելը, լինելով քեմալականության հոգեզավակներից մեկը, այնուամենայնիվ, թուրքական աշխարհակառուցման ջերմ ջատագովը դարձավ: Հատկապես ԽՍՀՄ-ի փլուզումից հետո փորձ արվեց թուրքալեզու երկրների, պետությունների վրա թուրքական գերիշխանություն տարածել, և Դավութօղլուն հաճախ էր շեշտում, որ իրենք ձգտում են «փափուկ ուժի» միջոցով պոկել Արևմուտքից այն, ինչը որ մահմեդական է,և տարածաշրջանում առաջնորդի դերակատարություն ստանձնելով՝ ռազմավարական լուրջ գործոն հանդիսանալ: Նրա հայտարարած «Զրո խնդիր հարևանների հետ» քաղաքականության հետևանքով իրականում ականատես ենք լինում, որ բազում խնդիրներ ու

---

[6] **Ալվրցյան Հ.,** *Ազգայնամոլությունը խարխլվող թուրքական ինքնության համայնապատկերում, http://akunq.net/am/?p=2902, 29.05.2010:*

հակասություններ կան, և ոչ թե մեկի, երկուսի, այլ գրեթե բոլոր հարևանների հետ, ներառյալ՝ Ռուսաստանը: Ընդլայնվում են այն տարածքները, որոնցում բիրտ ուժի միջոցով նրանք փորձում են խնդիրներ լուծել: Եվ այսօր, առավել քան երբևէ, ականատեսն ենք Հայոց ցեղասպանության ուրացման, ժխտման, պատմության կեղծարարության: Հայության համար սա ևս յուրօրինակ մարտահրավեր է՝ դիմակայելու ստին, կեղծիքին, ապատեղեկատվությանը, դարձյալ ապրելու հոգեկան մեծ տառապանք…

Թուրքիայում ավանդաբար առկա հայատյացությանն ու ազգային և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ հալածանքներին վերջին տարիներին գումարվել է քրդական հարցը, որը բավական հրատապ է դարձել հատկապես սիրիական ճգնաժամի համատեքստում: Հյուսիսային Սիրիայում քրդական ինքնավարության հնարավոր ստեղծումը խիստ անհանգստություն է պատճառում Թուրքիային, քանի որ նախ՝ անկախական ձգտումներն Իրաքի և Սիրիայի քրդերից կարող են տարածվել նաև Թուրքիայի քրդերի[7] մեջ, որոնք հիմնականում բնակվում են այդ երկրի արևելքում: Մյուս կողմից՝ քրդերի անջատողական ցանկությունների ակտիվացումը մեր օրերում կարող է լիովին ի չիք դարձնել տարիներ առաջ թուրքական իշխանությունների և քրդերի միջև ձեռք բերված համաձայնությունը՝ Թուրքիայում թուրքերի, քրդերի և այլ էթնիկ խմբերի խաղաղ գոյակցության վերաբերյալ[8]: Քրդական հարցի սրումը կարող է տարածաշրջանային նոր ապակայունացման օջախ ստեղծել Մերձավոր Արևելքում, որն իր բացասական ազդեցությունը կունենա ինչպես տարածաշրջանի հայ համայնքների վրա ընդհանրապես, այնպես էլ Թուրքիայի հայ համայնքի վրա՝ մասնավորապես: Ընդհանուր ապակայունության և բռնությունների ալիքին կարող է գումարվել նաև թուրքական իշխանությունների և ազգայնականորեն տրամադրված հետադեմ տարրերի կողմից հայ համայնքի թիրախավորումը և՛ որպես ավանդական թշնամական տարր, և՛ որպես քրդերի դաշնակից:

Իրանի Իսլամական Հանրապետության և Վրաստանի հետ Հայաստանը շարունակում է իր բարիդրացիական անընդհատ զարգացող և խորացող, եղբայրական ջերմ հարաբերությունները, որոնց կենտրոնում են նաև երկու երկրներում էլ դարերի պատմություն ունեցող հայկական ստվար համայնքները: Ցավոք, այս երկրներից էլ նկատվում է հայերի ակտիվ արտագաղթ դեպի ՌԴ և Արևմուտք, կան նաև հայրենիք վերադարձողներ:

Տարածաշրջանը, հատկապես Մերձավոր և Միջին Արևելքը չափազանց անկայուն է. կործանարար և օրեցօր ահագնացող պատե-

---

[7] Թուրքիայում քրդերի թվաքանակը հասնում է մոտ 14 միլիոնի:

[8] **Բարսեղյան Ա.,** Նոր Լոզան կամ նոր Թուրքիա (21-րդ ԴԱՐ, 2014, թիվ 3, էջ 90-106):

բազմը էական փոփոխություններ է մտցրել ոչ միայն համաշխարհային գործընթացներում՝ քաղաքական հավասարակշռության առումով, այլ նաև հայության կյանքում: Վերացման վտանգի առջև է կանգնած երբեմնի ծաղկող և գործունյա սիրիական համայնքը, մեծ հարված հասցրվեց նաև իրաքահայությանը: Տարածաշրջանում ավերվել են պատմամշակութային ժառանգության հուշարձաններ, հրո ճարակ են դարձել հոգևոր և աշխարհիկ գրականություն, ձեռագրեր, զոհվել և հաշմանդամ են դարձել հարյուրավոր մարդիկ: Վաթսուն հազարից ավելի հայեր արտագաղթել են Սիրիայից, նաև Իրաքից. նրանց մի մասը հաստատվել է հայրենիքում:

Աշխարհի վերաձևման գործընթացը շարունակվում է և առաջադրում նոր մարտահրավերներ և նոր մոտեցումներ գրեթե բոլոր բնագավառներում:

Միաբևեռ աշխարհը դառնում է բազմաբևեռ: Վերջին շրջանում Ռուսաստանի Դաշնության նախաձեռնած և նրա շուրջ ծավալվող իրադարձությունները նոր իրավիճակ են ստեղծել: Ռուսաստանը գործուն դերակատարություն է ստանձնել սիրիական ճգնաժամին ակտիվ միջամտելու և ռազմական ու բանակցային գործընթացներում իր վճռորոշ խոսքն ասելու ուղղությամբ: Ռուսաստանի դրսևորած նախաձեռնողական դիվանագիտությունը վերջ դրեց Սիրիայի «քիմիական զինանոցի» առասպելին:

Ռուսաստանի ակտիվ ներգրավման աճը միջազգային գործընթացներում ցույց է տալիս, որ աշխարհում իրադարձությունները, դրանց զարգացումներն այլևս չեն թելադրվում մեկ կենտրոնից:

Տարածաշրջանի համար էական նշանակություն ունի Իրանի միջուկային թնջուկի հանգուցալուծումը, որը տեղի ունեցավ Իրանի և վեցնյակի (ԱՄՆ, Ռուսաստան, Չինաստան, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա) բանակցությունների շնորհիվ:

Առանձին կենտրոնի դերակատարություն է այլևս ստանձնել Չինաստանը, և նրա օրեցօր զարգացող տնտեսությունը թույլ է տալիս այսօր աշխարհում մատնանշել առնվազն 4 ուժային կենտրոն՝ ԱՄՆ, Ռուսաստան, ԵՄ (Մեծ Բրիտանիայի դուրս գալը որոշակիորեն կթուլացնի ԵՄ-ն) և Չինաստան[9], որոնք էլ մեծապես ազդում են աշխարհի նկարագրի, նրա հետագա զարգացման վրա:

Ակնհայտ է, որ այսպիսի զարգացումներն իրենց ազդեցությունն են ունենում նաև հայկական իրականության վրա: Բնական է, որ Հայկական սփյուռքի համար շահեկան է բազմաբևեռ աշխարհի ձևավորումը, որովհետև տարբեր կենտրոնների շահերի հավասարակշռումը կարող է նվազեցնել խոշոր հակամարտությունների հավանականությունը:

---

[9] *Ավելի մանրամասն տե՛ս* **Վարդազարյան Ե.,** *ԱՄՆ, ԵՄ և ՌԴ հայեցակարգային մոտեցումները անվտանգության հիմնախնդիրներին (21-րդ ԴԱՐ, թիվ 5 (45), 2012, էջ 50-67):*

Կարելի է ենթադրել, որ գերտերություններն այս պարագայում ստիպված կլինեն իրենց հակասությունները լուծել բանակցությունների և փոխզիջումների ճանապարհով՝ փորձելով ներդաշնակեցնել միմյանց շահերը: Այս պարագայում էապես կնվազի որևէ երկրի (գերտերության) կողմից առանց մյուսների համաձայնության (առանց միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների պահպանման, առանց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թույլտվության) միակողմանի ռազմական գործողությունների հավանականությունը այս կամ այն երկրի դեմ[10], որն էլ աշխարհասփյուռ հայության համար դրական իրավիճակ կարող է ստեղծել:

Մերձավոր Արևելքի կազմակերպված և ուժեղ համայնքներից կենսունակ են մնացել Լիբանանի և Իրանի հայ համայնքները: Որոշակի վերապահումներով նրանց կարելի է ավելացնել նաև Թուրքիայի հայ համայնքը:

Կրոնական դրդապատճառներով ծայրահեղականության աճ է գրանցվում՝ հիմնականում դրսևորվելով Մերձավոր Արևելքում: Այստեղ առճակատումը տեղի է ունենում ոչ միայն և ոչ այնքան քրիստոնյա-մահմեդական, որքան ներիսլամական հարթության վրա: Միջկրոնական ոլորտում ծայրահեղականությունը Մերձավոր Արևելքի բոլոր քրիստոնեական համայնքների թվում անդառնալի վնաս է հասցնում նաև հայկական համայնքներին: Մինչդեռ այդ շրջանում համայնք ունենալու հարցը կարևոր խնդիր է աշխարհաքաղաքական առումով, մյուս կողմից՝ հարյուրավոր տարիների մեր ստեղծած նյութական և մշակութային ժառանգությունը պահպանման, սրտացավ տիրոջ կարիք ունի: Միաժամանակ սիրիական թնջուկի լուծմանը նպատակաուղղված ջանքերին ընդառաջ՝ հայությունը պետք է ձեռնարկի համակարգված քայլեր՝ նպատակաուղղված օր առաջ խաղաղության հաստատման, կացության պահպանման համար: Այստեղ կարևոր դերակատարություն ունեն լոբբիստական կառույցները, որոնք հատկապես ԱՄՆ-ում կարող են արդյունավետ եղանակներով մշտապես պահանջներ առաջադրել և պայքարել Սիրիայում քրիստոնյաների, մասնավորապես՝ հայերի կյանքի և իրավունքների պաշտպանության համար:

Ահաբեկիչների վայրագությունները զայրույթ ու տարակուսանք են առաջացնում ողջ աշխարհում, մարդկային դիմագիծը կորցրած հանցախմբերն անխնա ոչնչացնում են քաղաքակրթության նմուշներ, պատմամշակութային արժեքներ ու հուշարձաններ: Պալմիրայի (որն ընդգրկված է համաշխարհային մշակութային արժեքների ցանկում) գրավումը և դրա ոչնչացման նպատակով նրան հասցված ահռելի վընասները, Մոսուլի գրադարանի հրդեհումը (որտեղ պահվում էին անգնահատելի ձեռագրեր), այդ քաղաքի բազմաթիվ պատմամշակութա-

[10] Ինչպես նախկինում դա եղավ՝ 1999 թ.՝ Հարավսլավիայի, 2001 թ.՝ Աֆղանստանի, 2003 թ.՝ Իրաքի դեմ:

յին հուշարձանների ոչնչացումը ներկայացվում են որպես պայքար կռապաշտության դեմ:

Խնդիրը դարձել է բազմաթիվ միջազգային կառույցների մտահոգության առարկան, և պատահական չէ, որ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կիմունը կոչ է արել առ այն, որ «աշխարհի քաղաքացիները պետք է նույնքան ուժեղ լինեն մշակույթի և մշակութային ժառանգության պահպանման ու պաշտպանության հարցում, որքան ծայրահեղականները՝ դրանք ոչնչացնելու հարցում»[11]:

Գլուխ է բարձրացնում նաև ազգայնական ծայրահեղականությունն աշխարհում: Այն որոշակիորեն առկա է հետխորհրդային երկրներում (ինչպես նախկին սոցիալիստական, այնպես էլ ԽՍՀՄ անդամ երկրներում), որտեղ ազգայնականության վերելքը երբեմն էլ ստանում է հակառուսական դրսևորումներ: Արևելյան Եվրոպայի նախկին սոցիալիստական ճամբարի երկրներում առկա են ստվարաթիվ հայկական համայնքներ, որտեղ էթնիկ հողի վրա ծայրահեղականության դրսևորումները կարող են որոշակիորեն սպառնալիք դառնալ փոքրաթիվ համայնքների համար:

Սոցիալ-տնտեսական և քաղաքակրթական հողի վրա ծայրահեղականություն է դրսևորվում միգրանտների նկատմամբ, մանավանդ որ միլիոնավոր մարդկանց անկառավարելի հոսք տեղի ունեցավ դեպի Եվրոպա և արևմտյան այլ երկրներ: Այն առաջացրեց սոցիալական լարվածություն տնտեսապես ոչ այնքան զարգացած երկրներում (Հունաստան, Արևելյան Եվրոպայի այլ երկրներ): Տեղի բնակչության զայրույթն ուղղվում է ոչ միայն սեփական իշխանությունների, այլև ներգաղթյալների դեմ, որոնք էականորեն ազդում են եվրոպական երկրներում սոցիալ-տնտեսական դրության վրա և զգալիորեն վատթարացնում այն: Այս տեղաշարժերի կնիքը իրենց վրա կրում են նաև եվրոպական երկրներում առկա հայկական բազմաթիվ համայնքները, քանի որ տնտեսական իրավիճակի վատթարացումը բնականաբար անդրադառնում է նաև հայ համայնքի կենսամակարդակի վրա:

Որոշ ծայրահեղական դրսևորումներ կան նաև Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում, Աֆրիկայում, հետխորհրդային տարածքի այլ երկրներում: Դժվար է չհամաձայնել հետևյալ մտքի հետ. «Տպավորություն է ստեղծվում, թե ծայրահեղականության ալիքը ծածկում է ամբողջ գլոբալ տարածքը, և կան բոլոր հիմքերն այս երևույթը կարևորագույն համաշխարհային սոցիալ-քաղաքական միտում համարելու համար»[12]:

---

[11] **Gonzalez S.** *Protect cultural heritage and the environment, and respect differences, urges U. N. Secretary-General, 13 April, 2016, http://news.yale.edu/2016/04/13/protect-cultural-heritage-and-environment-and-respect-differences-urges-un-secretary-gene.*

[12] **Հարությունյան Գ.,** *Ծայրահեղականության աճը և «մտավոր հավասարության» գործոնը (21-րդ ԴԱՐ, 2015, թիվ 5, էջ 5):*

Աշխարհի առաջադեմ երկրները ջանքեր են գործադրում մշակելու և կիրառելու առավել արդյունավետ միջոցներ աշխարհում նման դրսևորումներն արմատախիլ անելու համար: Փախստականների և միգրատների հիմնախնդիրներին էր նվիրված նաև 2016 թ. սեպտեմբերի 19-ին Նյու Յորքում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 71-րդ նստաշրջանը, որի առաջին նիստը նախագահում էր Հայաստանը: Այստեղ էր, որ ՄԱԿ-ը համապատասխան Հռչակագրի ընդունմամբ հերթական անգամ կոչ արեց դիմել հստակ գործողությունների՝ սերունդների համար առավել լուսավոր ապագա կառուցելու համար:

«Միասին մենք կարող ենք և պարտավոր ենք կառուցել ավելի մարդկային աշխարհ՝ մարդկային կյանքեր փրկող մարդասիրական գործողությունների ծավալման առավել խոր նվիրվածությամբ»[13],- նշել է իր ուղերձում ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Բան Կիմունը Մարդասիրության համաշխարհային օրվա առթիվ:

Կրկնվող համաշխարհային ճգնաժամերն իրենց ազդեցությունն են ունենում ոչ միայն Հայաստանի տնտեսության, այլև հայկական կապիտալի վրա: Չնայած վերելք են ապրում հատկապես Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների՝ Չինաստանի, Հարավային Կորեայի, Մալայզիայի, Ինդոնեզիայի տնտեսությունները, տեղի են ունենում նաև տնտեսական ինտեգրացիայի գործընթացներ, այնուամենայնիվ, հարավարևելյան Ասիայի երկրներում նկատվում է տնտեսական ճգնաժամ: Այս տարածաշրջանում հայ համայնքները շատ փոքրաթիվ են և գրեթե չունեն որևէ դերակատարություն զարգացումների տեսանկյունից:

Ակնհայտ է, որ տարբեր տարածաշրջաններում ձևավորված հզոր կենտրոնները տնտեսական, քաղաքական, և այլ առումներով դառնում են ազդեցության կենտրոններ տարածաշրջանի մյուս երկրների համար: Եվ կարծես ձևավորվում են տնտեսական տարածաշրջանային գոտիներ՝ գլոբալ տնտեսության փոխարեն: Ամերիկա աշխարհամասում երկրները համախմբվում են ԱՄՆ-ի շուրջ, եվրոպական երկրները ԵՄ-ի ձևաչափով են կազմում տնտեսական ամբողջություն, իսկ ԵԱՏՄ տարածքում այդ դերակատարությունը փորձում է ստանձնել ՌԴ-ն: Ասիա-խաղաղօվկիանոսյան երկրների տնտեսական ինտեգրացիայի կենտրոնն էլ Չինաստանն է: Այսպիսի տնտեսական համախմբումների պայմաններում Հայկական սփյուռքի կապիտալն էլ ոչ թե համաշխարհային տնտեսության մաս է կազմում, այլ առանձին տարածաշրջանային տնտեսությունների շրջանակներում է գործառում:

Այս պայմաններում, չնայած համաշխարհային տնտեսության բաժանարար գծերին, ցանկալի է, որ Սփյուռքը, այնուամենայնիվ, միաս-

---

[13] **Ki-moon Ban.** *Remarks to Member States briefing on the World Humanitarian Summit, 20 April 2015, https://www.un.org/sg/en/content/sg/speeches/2015-04-20/remarks-member-states-briefing-world-humanitarian-summit.*

նական լինի: Եթե միասնականության ապահովման գործուն մեխանիզմների առկայությունը զուգակցվի հնարավորությունների բազմազանությունից առավելագույնս օգտվելու քաղաքականության հետ, ապա դրանից կշահեն Հայկական սփյուռքն ու հայությունն ընդհանրապես:

Համաշխարհային զարգացումների ներկա փուլում առավել ճկուն և նպատակային գործունեություն կարող են ծավալել հատկապես համահայկական կառույցները՝ հայոց պետության հետ համաքայլ: Համայնքների ներուժն ու հնարավորությունները նպատակային օգտագործելու դեպքում արդյունքներն առավել շոշափելի կդառնան:

Լինելով խիստ աշխարհատարած՝ Հայկական սփյուռքն ապրում է մակընթացություններ և տեղատվություններ մոլորակի յուրաքանչյուր ալեկոծությունների ժամանակ: Եվ պատահական չէ, որ Սփյուռքի առջև ծառանում են մարտահրավերներ, խնդիրներ:

Հայկական սփյուռքի լայն ու ոչ միասնական տարածական ընդգրկումն արդեն էական ազդեցություն է ունենում նրա գործելառճի, կենսակերպի, նկարագրի, մոտեցումների, ինքնության հիմնախնդիրների վրա: Համայնքների համախմբվածության, բնութագրի վրա իր կնիքն է դնում նաև բնակության երկրի զարգացման աստիճանը, քաղաքական ռեժիմը, ինչպես նաև այդ երկրում կրոնական մեծամասնության առկայությունը: Հատկապես վերջինս առավել է ազդում ինքնության պահպանման վրա:

Մերձավոր Արևելքում, Թուրքիայում, Եգիպտոսում՝ առավելապես մահմեդական միջավայրում, հայությունը կառչած է մնում իր արմատներին, ինքնությանը, լեզվին, պատմությանը: Սակայն նույնը չի կարելի ասել քրիստոնեական և զարգացած երկրների մասին, որոնցում ազատական գաղափարներն ու միջավայրն արագացնում են ձուլման գործընթացը:

Ազգային ինքնությունը չկարևորող միջավայրում հասակ առած հայ երիտասարդը, ազգային կառույցների հետ քիչ թե շատ առնչվելով (դա կախված է կրոնադավանական տարբերություններից, սոցիալ-մշակութային միջավայրից, համահարթեցնող արագընթաց համաշխարհայնացումից, անհատական գործոններից և այլն), Սփյուռքում մի որոշ ժամանակ դեռ կարող է պահպանել իր ազգային ինքնության ու ազգային ինքնագիտակցության տարրերը: Սակայն իրար հաջորդող սերնդափոխությունն ու խառնամուսնությունները, մայրենի լեզվի խորհրդանշական իմացությունը կամ ընդհանրապես կորուստը սփյուռքահային գիտակցական հայից հետզհետե վերածել, վերածում և շարունակելու են վերածել «խորհրդանշական»՝ զգացական հայի[14]*, ապա նաև՝ «ձուլված, համահարթեցված» ինքնության, որը և դառնում է*

---

[14] **Ավագյան Ք.**, *Սերնդափոխության հեռանկարները Սփյուռքում (Լրաբեր հա-սարակական գիտությունների, 2015, թիվ 2, էջ 124-137): Տե՛ս նաև* **Bakalian A.** *Armenian-Americans: From Being to Feeling Armenian. New Brunswick, London, 1993, pp. 393-396:*

շրջանառության մեջ դրված ցավալի, թերևս նաև արհամարհական «ծագումով հայ» բնորոշման կրողը: Բավական է հիշել Ռումինիայում և Լեհաստանում X-XI դարերում հաստատված հայահոծ համայնքների պատմությունը, որոնցից ներկայում հայկական որևէ հետք չի մնացել: Ճիշտ է, Հայաստանի անկախացումից հետո ինչ-որ դրական տեղաշարժեր նկատվում են (օրինակ՝ Լեհաստանի Սեյմի պատգամավոր Լուկաշ Աբգարովիչը հաստատում է իր հայ լինելը, Ռումինիայի որոշ քաղաքներում հայկական համայնքներ են ձևավորվում հազար տարի անց իրենց ազգային ակունքներին վերադարձող մարդկանցից), սակայն դրանք օրինաչափության չեն վերածվում: Ուծացման գործընթացն օտարության մեջ անխուսափելի է, և դրան ըստ հնարավորին դիմակայելու համար է, որ Հայաստանն ու սփյուռքյան կառույցները հայապահպանությունը հռչակել են գլխավոր նպատակ:

Աստիճանաբար ավելանում է ազգային խնդիրներին անտարբեր հանրույթի քանակը, փոխվում որակը: Այդպիսիք կամա թե ակամա պատրաստ են մշտապես ծառայելու իրենց բնակության երկրների քաղաքական շահերին ու գաղափարախոսությանը (որոնք, ի դեպ, միշտ չէ, որ համընկնում են Հայաստանի տնտեսական, քաղաքական, ռազմաստրատեգիական շահերին ու առաջնահերթություններին): Ինչ խոսք, նման հանրույթների ներկայացուցիչները նախ այն երկրների քաղաքացիներն են, որտեղ ապրում են, ուսում, կրթություն, աշխատանք, վարձատրություն են ստանում՝ դրանից բխող իրավունքներով ու պարտականություններով: Այս տեսակետից՝ երբեմնի միատարր Հայկական սփյուռքը աստիճանաբար համաշխարհայնացվում է, և նրա զգալի հատվածն իր բոլոր շերտերով (ցեղասպանությունից առաջ և հետո արտագաղթածներ, նախկին հայրենադարձ արտագաղթյալներ, անկախ Հայաստանից արտագաղթածներ) և սերունդներով (հայ, ծագումով հայ) Հայաստանի երկրապահպան ջանքերին այս կամ այն չափով մնում է անհաղորդ: Ճիշտ է, 2016թ. ապրիլյան դեպքերը Սփյուռքում զարթոնքի ալիք բարձրացրին, սակայն առանձին դեպքերում հայության որոշ հատվածներ այդպես էլ անմասն մնացին հայրենիքին պատուհասած փորձությանը դիմագրավելու ջանքերից:

Սփյուռքի առջև ծառացած մարտահրավերներից գլխավորը հայապահպանության խնդիրներն են: Առաջնահերթ խնդիր է մնում հայ ինքնության պահպանումը ընտանիքի, եկեղեցու, դպրոցի, մշակույթի և շատ ու շատ այլ գործոնների միջոցով, որոնցից ոչ մեկը չպետք է անտեսել կամ թերագնահատել:

Յուրօրինակ համախմբվածություն, Արցախի իրավունքներին տեր կանգնելու կամք դրսևորեցին հատկապես ժողովրդավարական հասարակություններում ապրող մեր ազգակիցները: Արցախի դեպքերը ցնցեցին հայությունից հեռացած շատ շատերի, և ցավն ու պատասխանատվությունը մի նոր շարժում ծավալեցին Սփյուռքում. այս իրողությունը սփյուռքյան կազմակերպությունների ուշադրությունից չպետք է

վրիպի, ազգային ակունքներին վերադարձը պետք է բարձր գնահատվի և ամրապնդվի:

Հայոց ցեղասպանությունից և արևմտահայության հայրենազրկումից 100 տարի անց, Լեռնային Ղարաբաղի չլուծված հակամարտության և քսանհինգամյա անկախ հայրենիքի առկայությամբ, արդի աշխարհաքաղաքական մարտահրավերների համատեքստում համայնքային կյանքը Սփյուռքում արմատական վերատեսության, վերակազմակերպման կարիք ունի: Այսօր Սփյուռքը մասնագիտորեն կառուցակարգելու, Սփյուռքի համայնքների ներուժը միմյանց և հայրենիքի հետ կապելու հրամայական, պահանջ կա: ՀՀ Նախագահի՝ «Մեր խնդիրները մենք ենք լուծելու», «Մեր հույսը մեզ վրա պետք է դնենք» հայտարարությունները սթափության կոչ են՝ ուղղված հայ ժողովրդին և միտված Սփյուռքը հայ պահելուն ու Սփյուռքի ներուժը հայրենիքի պաշտպանության, ապահովության և զարգացման համար օգտագործելուն: Սփյուռքը կառուցվածքային առումով վերատեսության կարող է ենթարկվել, հզորանալ և համայնքներից «գաղթած» հայերին վերադարձնել համայնքներ:

Մեծ թվով սփյուռքահայեր չեն մասնակցում համայնքային կյանքին, մեծացել է ուծացման վտանգը, ավելացել խառնամուսնությունների թիվը, գնալով պակասում է հայերենով խոսողների թիվը, հայկական դպրոց հաճախող աշակերտների թիվը նվազում է: Չկա համակարգված աշխատանք «հին» և «նոր» համայնքների միջև, տարբերակված մոտեցում «հաջողակ» և «խոցելի» խմբերի հետ աշխատանքներում, որը պետք է դառնա առաջիկայում Հայաստանի և սփյուռքյան կառույցների առաջնահերթություններից:

Այս և նման մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է՝

1. Ջանքեր գործադրել, որ օտարության մեջ հայկական, ազգային ռեսուրսները,մտավոր ու ֆիզիկական ներուժը, նյութական արժեքները, ֆինանսական հնարավորինս շատ միջոցները (ներդրումների, ոլորտների հովանավորության, բարեգործության, հիմնադրամների միջոցով) ուղղորդվեն դեպի հայրենիք՝ փոխելու Հայաստանի ու Արցախի ինչպես ժողովրդագրական ու սոցիալական, այնպես էլ ֆինանսատնտեսական, քաղաքական ու սոցիալ-մշակութային իրավիճակը՝ դրանով նաև նպաստելով տարածաշրջանային հավասարակշռությանը:

2. Շատ տեղերում ծառացած է ինքնակազմակերպման խնդիրը: Սփյուռքում կան համայնքներ, որոնք կազմակերպված չեն:Անհրաժեշտ է նրանց օգնել կարողությունների ձևավորման հարցում, հատկապես Մեքսիկայում, Աֆրիկայում, Հարավային Ամերիկայում, ՌԴ-ի որոշ տարածքներում: Չնայած բազմազանությանը, մշակութային և լեզվական տարբերություններին՝ հայերը, այնուամենայնիվ, ցանկություն ունեն համախմբվելու՝ համայնքային, մշակութային կյանք կազմակերպելու ակնկալիքով: Հետևաբար հետևողական աշխատանքների միջո-

ցով պետք է սերտացնել գործակցությունը հայկական պետական, դիվանագիտական, ժողովրդական դիվանագիտության և լոբբիստական կազմակերպությունների, «նոր համայնքների» հետ՝ ի նպաստ հայ ազգային-պետական շահերի՝ դրանց ներդաշնակեցման ճանապարհով:

3. Ազգային նպատակ դարձնել ժողովրդագրական ցուցանիշների էական բարելավումը և խնդիր դնել, որ յուրաքանչյուր նորաստեղծ հայ ընտանիքում 3 և ավելի երեխաներ ծնվեն և, որպես ինքնության այբուբեն, երեխաներին կոչեն հայկական անուններով:

4. Մեր ազգային ամենագլխավոր նպատակը, երազանքը պետք է դառնա «Հզոր Հայաստան» կառուցելը, և հայկական բոլոր հատվածները պարտավոր են մշակել դրան հասնելու ծրագրեր՝ ներգրավելով յուրաքանչյուր հայի այդ շարժման մեջ: Հայոց պետության և հայ ժողովրդի գաղափարական հենքը «Հզոր Հայաստանի» կառուցման գաղափարը պետք է դառնա: Ընդհանրական դարձնել այն բանի գիտակցումը, որ օտարության մեջ բարիքներ ստեղծելու, օտար երկիր շենացնելու հետ մեկտեղ հարկ է հայրենի երկրի համար ևս որոշակի գործ անել, նաև հայրենի հողի վրա արարել, ստեղծագործել ու կառուցել՝ շենացնելով սեփական տունը, օջախը, որն ամենից մեծ տուրքը կլինի անցյալ դարասկզբին նահատակված ազգակիցների հիշատակին և կնպաստի ազատ ու շեն հայրենիք ունենալու նրանց բաղձանքի իրականացմանը:

5. Հայաստանը համայն հայության հայրենիքն է: Կայացած ու գրագետ, կազմակերպված ու կարող հայերը ջանք ու եռանդ չպետք է խնայեն հայրենիքին օգտակար լինելու համար: «Ամեն ինչ հայրենիքի համար», «Հզոր Հայաստանի» կառուցումը, աշխարհում հայի տեսակի պահպանումը՝ որպես գերագույն խնդիրներ, հայոց պետության, հայկական կազմակերպությունների առաջնահերթ գործը պետք է դառնան:

XXI դարում հայկական պետականության և աշխարհասփյուռ հայության առջև ծառացած արտաքին և ներքին մարտահրավերները պահանջում են նոր որակ և բովանդակություն հաղորդել հայոց պետականության ամրապնդման և հայապահպանության գրավականին՝ Հայաստան-Սփյուռք գործակցությանը՝ հենվելով առավելապես մարդկային, մշակութային և սոցիալական կապիտալի, հասարակական լիարժեք ինտեգրման և մրցունակության կռվանների վրա:

Հայաստանն ու Սփյուռքը, սերելով ազգային, պատմամշակութային նույն արմատից, հզոր են մեկը մյուսով: Հայաստանի առջև ծառացած մարտահրավերները Սփյուռքինն են, իսկ Սփյուռքի հիմնախնդիրները՝ Հայաստանինը: Հայ ժողովրդի հզորությունը բոլոր հայերի հավաքական միասնության մեջ է: Ուստի Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացումն ուղղված է հայ ժողովրդի տարբեր հատվածների կարողությունների բազմապատկմանը, Հայաստանի և Սփյուռքի հզորացմանն ու առաջընթացին:

Առաջնորդվենք այն գիտակցությամբ, որ հայ լինելը և պատիվ է, և պարտավորություն, որ սփյուռքահայի համար բնակության երկիրը ծննդավայր է, իսկ Հայաստանը՝ հայրենիք, ուրեմն համատեղ ուժերով կառուցենք «Հզոր Հայաստան»:

Մենք միասին ենք կերտելու մեր պատմությունն ու ապագան՝ հանուն հզոր Հայաստանի, հանուն անկախ և պաշտպանված Արցախի, հանուն առաջադեմ ու կազմակերպված Սփյուռքի, հանուն հայ տեսակի պահպանման:

Միայն հավաքական ուժով կարող ենք հայրենիքը դարձնել զարգացած ու բարեկեցիկ, միայն համախումբ ունակ կլինենք դիմակայելու բոլոր կարգի մարտահրավերներին, միայն միասնաբար կհաջողենք դառնալ հայրենիքի զորացման համար պայքարող, ազգային պետականությանն ու բանակին սատարող հավաքականություն: Զորությունը միության մեջ է:

ВЫЗОВЫ АРМЯНСКОЙ ДЕЙСТВИТЕЛЬНОСТИ В ДИНАМИЧНОМ МИРЕ

АКОПЯН Г. Г.

Резюме

Одной из главных проблем Спюрка является сохранение армянской национальной идентичности посредством семьи, церкви, школы, передачи культурных традиций и многих иных факторов, которые в одинаковой степени важны в этом вопросе.

В контексте современных геополитических вызовов необходимо, чтобы национальные ресурсы армянской Диаспоры, ее интеллектуальный и физический потенциал, материальные средства (посредством инвестиций, благотворительности и тех или иных фондов) были задействованы в направлении изменения как демографической и социальной, так и финансово-экономической, политической и социально-культурной ситуации в Армении и Арцахе, что будет содействовать установлению регионального равновесия.

THE CHALLENGES OF ARMENIAN REALITY IN A CHANGING WORLD

H. HAKOBYAN

Abstract

The article thoroughly presents the main problems and challenges the country faces during the creation of the independent state, their objective and subjective reasons and ways to overcome the difficulties, as well as the problems of the Diaspora in a new situation. The main problems in the Middle East and the Caucasus region are analyzed, and in this context the key regional problems threatening NKR and the RA. We also consider the factors that threaten the existence of the Armenian Diaspora, as well as ways of possible solutions of these problems.